բաժանեալ եմք 'ի չորս մասունս. ըստ չորից ազգաց, որք են Լատինք, Սէրվիացիք, Յոյնք, Վիրք և այլ հետեւակ համազգայինք մեր։ Նոյնպէս Հայք եւ հետեւակք նոցա, Հապէշք, Գոլթիք և Ասորիք. և այսպէս առանց հակառակութեան հաւասար բաժանէաք 'ի միջի մերում. այժմ Հայք 'ի բաց հրաժարին և չհամին վճարել ընդ մեզ զհարկս եկեղեցեաց եւ զտուգանս սպանութեանց։ Եւ յերեկոյի ծրագալուցի Զատկին ընդ Հայոց 'ի միասին մտանէաք 'ի Գերեզմանն 'ի կատարել զհանդէս Լուսաւորութեան. այժմ Հապէշք քան զամենեսին յառաջ մտանեն. և Հայք, նոքա հետեւակք մեր են ասելով, կամին նախ քան զմեզ մտանել. խնդրեմք հարցանել ցՊատրիարքն Հայոց, եւ ապա պատուիրել նմա ընդ մեզ վճարել զտուգանսն, և 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն։

Յառաջ մատեաւ Անդրիաս Պատրիարք և ասէ, արդարեւ Հապէշք հետեւակ են մեզ, և նախ քան զամենեսին մտանեն 'ի Գերեզմանն՝ և Հայք ընդ նոսա, ըստ առաջին սովորութեան, զհարկն բաժանեմք 'ի չորս մասունս, եւ երեք ազգքն հետեւակ են մեզ, տնօրինեմք զգործս նոցա, կարգաւորեմք զինդիրս կալուածոց նոցին, կարգեմք 'ի պաշտօն և հանեմք անտի։ Պատրիարքունք Հայոց տիրեն և ժառանգեն զստացուածս վախճանեալ վարդապետաց նոցին, որպէս յայտ առնեն զայսոսիկ հրովարտակն արքային Սէլիմայ, և դաշնագիրք Օմարայ և Սալահատտինի, և հրովարտակք առաջին թագաւորաց, յորս հաստատեալ են եկեղեցիք սեփհականութիւնք եւ հետեւակքն մեր. և արձանագրեալ 'ի տումարն կայսերական, շնորհեցին մեզ հրովարտակ։ Իսկ զհարկն եկեղեցեաց եւ հետեւակաց մերոց, և զտուգանս սպանութեանց, տուեալ եմք ընդ նոսա, որպէս Յոյնք ընդ հետեւակս իւրեանց, զի գործք եկեղեցեաց եւ հետեւակացն Յունաց, պատկանին նոցա. նոյնպէս և գործք եկեղեցեաց և հետեւակացն Հայոց, պատկանին մեզ. զպատճէն Կայսերական տումարին եւ զհրովարտակն ունիմք առ մեզ, ընթերցցի, եւ ապա ստուգեսցի 'ի հաւատարիմ արանց, եւ ըստ զօրութեան նոցին որոշեսցի, և բարձցի 'ի միջոյ նանիր ամբաստանութիւն Գերմանոսի։ Ընթերցան յատենի անդ զգրեանս, զոր